Պարոն/Տիկին Գ. Գևորգյան ին

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղրամյան

«04» 06 2024թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող **հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղրամյանին**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**

- Արթուր Սաֆարյան,
- Գևորգ Գևորգյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- գլխավոր քարտուղար,
- հեռահաղորդակցության վարչության պետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Ժնև, Շվեյցարիա, 2024 թվականի մայիսի 27-29-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Հեռահաղորդակցության միջազգային միություն (ITU):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից կազմակերպվող Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթնաժողովի ֆորումին (WSIS+20):

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ Այս տարի նշվում էր Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթնաժողովի ֆորումի (WSIS+20) արդյունքների իրականացման քսան ամյակը: 2003 թվականին Ժնևում և 2005 թվականին Թունիսում WSIS-ը սահմանեց թվային համագործակցության համաշխարհային

առաջնահերթությունները՝ մարդակենտրոն, ներառական և զարգացմանը միտված տեղեկատվական և գիտելիքի հասարակություններ կառուցելու տեսլականն ու նպատակները:

Չնայած նրան, որ վերջին քսան տարում տեղեկատվական համակարգերը զգալի զարգացում են ապրել, WSIS-ի արդյունքները մնում են խիստ արդիական: WSIS-ի սկզբունքները և տարեկան գործունեության ծրագրերի դրույթները կարևորվում են թվային քաղաքականության և հեռահաղորդակցության ոլորտի կարգավորման քննարկումներում:

Ֆորումի ընթացքում կայացել է շուրջ 200 նիստ, ներառյալ բարձր մակարդակի լիագումար նիստեր, ինտերակտիվ նիստեր, ցուցահանդեսներ, WSIS մրցանակաբաշխությունների, ինչպես նաև նախարարական կլոր սեղան քննարկում, մասնակցել է շուրջ 8000 մասնակից 160 երկրներից, որից 500՝ բարձրաստիճան պաշտոնյաներ:

Հանձնաժողովը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող ազգային մարմին, մասնակցություն ունեցավ «Առաջնորդների TalkX. Կապի հրամայականը. Ներառական տեղեկատվության հասանելիության հիմքի ստեղծում» թեմայով նիստին, որի ընթացքում, պանելային քննարկման շրջանակում Հանձնաժողովի նախագահ Գ. Բաղրամյանը ներկայացրեց Հայաստանի գրանցած հաջողությունները հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացման գործում, և դրանում Ազգային կարգավորող մարմնի դերը՝ 2006 թվականին հեռահաղորդակցության շուկայի ազատականացումից ի վեր հանրապետությունում հեռահաղորդկացության ենթակառուցվածքների զարգացման դինամիկան, այդ ուղղությամբ կարգավորող մարմնի կողմից իրականացված թիրախային կարգավորումներն ու միջոցառումներն, ինչպես նաև ոլորտի զարգացման ուղղությամբ նախատեսվող հետագա կարգավորման ծրագրերը:

7.Հանդիպումները, ելույթները՝ ֆորումի ընթացքում հանձնաժողովը հանդես է եկել Հայաստանում հեռահաղորդկացության ենթակառուցվածքների զարգացման վերաբերյալ ելույթով (ելույթի տեքստը կցվում է):

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ ֆորումի ընթացքում չկան ընդունված որոշումներ, պայմանավորվածություններ և ստորագրված փաստաթղթեր:

Ֆորումի օրակարգի, դրա ընթացքում կայացած ելույթների և այլ մանրամասների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.itu.int/net4/wsis/forum/2024/Agenda:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ֆորումի արդյունքներով պայմանավորված՝ առաջարկում ենք շարունակել մասնակցությունները Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից հետագայում կազմակերպվելիք Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթնաժողովի ֆորումներին, հաշվի առնելով հեռահաղորդակցության ոլորտի զարգացման և կարգավորման լավագույն փորձի ուսումնասիրության առումով նման միջոցառումների կարևորությունը, ինչը հնարավորություն է ընձեռում՝ ըստ առաջնահերթությունների տեղայնացնել կարգավորման միջազգային փորձն ու բարձրացնել Հայաստանի Հանրապետության վարկանիշը նման հարթակներում:

Գործուղվող ---------- 03.06.24 ***Ա. Սաֆարյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- ***Գ. Գևորգյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)
04.06.24

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 361-ՀՆ, 02.05.2024թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահ **Գարեգին Բաղրամյանին** ,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի գլխավոր քարտուղար **Արթուր Սաֆարյանին** ,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ **Գևորգ Գևորգյանային** :

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք. **Շվեյցարիա / ժնև /**

5. Գործուղման ժամկետները՝ **26.05-30.05.2024թ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գարեգին Բաղրամյան	Արթուր Սաֆարյան	Գևորգ Գևորգյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	10989	10989	10989	32.967
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	219,780	219,780	219,780	659.340
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ դոլար)	197	197	197	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	76,314	76,314	76,314	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	305,255	305,255	305,255	915.766
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ դոլար)	155	155	155	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	60,035	60,035	60,035	
	Օրերի քանակը	5	5	5	
	Ընդամենը (դրամ)	300,173	300,173	300,173	900.519
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար		20,000		20.000
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		836.197	836.197	836.197	2,528.592

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 04.06.2024թ.